2. ԱՍԼԱՆ-ԲԱԼԱՍՈՒՆ ՀԱՔՅԱԹԸ

Իլալ ա չիլալ մին թաքավեր։ Էս թաքավերես վաղին մին պառավ կնեգյ եկալ ա թաքավերեն ասալ. «Թաքավերն ապրած կենա, քու տերությունումտ մին կնեգյ մին խոխա ա պերալ, վըեր մըծանա, քու թաքավերությունտ ծեռքատ խլելու ա, շուտ ըրա ընդրա կլոխը կեր»։

Թաքավերն էս վըեր ըսկացալ ա, վխեցալ ա, եր ա կացալ քյեցալ էն կնգանը ասալ. «Բա՛չի, էտ խուխետ հի՞նչ տամ»։

— Թաքավերն ապրած կենա,— ասալ ա էն կնեգյը,— էս խոխան ծախու չի։

— Քսան մանեթ տամ, ինձ տո՛,— ասալ ա թաքավերը։

— Տալ չը՛մ,—ասալ ա էն կնեգյը։

— Հազար մանեթ տամ, ինձ տո՛։

— Տալ չը՛մ։

— Էտ տղեն քշռքավը մին փող տամ, տո՛։

— Տալ չը՛մ։

— Էրկու քշռքավը մին փող տամ,— ասալ ա թաքավերը։

— Լավ ա, տոք, կտամ,— ասալ ա էն կնեգյը։

Թաքավերն էլ պերալ ա տղեն էրկու քշռքավը մին փող տվալ։ Էս կնեգյն էլ եր ա կալալ հու տղան տվալ թաքավերեն։ Թաքավերն էլ էս տղան տվալ ա ուրան նաղիր-վաղիրին, թա. «Տարեքյ մուրթեցեքյ հու պերեքյ փլավես յրան տիրեքյ, ես օտիմ»։

Նաղիր-վաղիրնեն էս տղան եր ըն կալալ հու մին էլ

մին ղամա ըն տարալ վրեր ըսպանեն։ Էս նազիր-վազիրնեն հղրցեն մեռք ըն ըրալ, վրեր ըսպանին վեչ, ամմա տանին տինին մին քոլու տակե հու մին օրիշ զատ ըսպանին։ Ըրկոքանն էլ՝ հավան ըն կըցալ հու տարալ մին քոլու տակե տիրալ։ Ենանա ընդըղերքին մտեգ ըրալ, տեսալ ըն վրեր մին շնըլակուտ կա, փոնալ ըն մորթալ հու պերալ տոն։ Ենանա փլավը նան շնըլակուտը վրեր իփալ ա պրծալ, փլավը ածալ ըն մին աման հու շնըլակուտը յրան տիրալ, տարալ թաքավերեն ըռաչին տիրալ։ Թաքավերն էլ փլավը հու մին էլ շնըլակուտը իշտըհալի կերալ ա պրծալ, ենանա ասալ. «Ըշշա՜հ, ամմա հինչ համեղ ա»։

Էս տղեն վրեր տարած ըն իլալ մին քոլու տակե տիրած, մին ճոտը ըստակած ասլան ամեն վախտ կյամ ա իլալ էս տղեն ծեծ տամ։ Էս ասլանը էս տղես ամեն վախտ ծեծ ա տվալ, մնացալ ա էս տղան մեծ տղա տըբեռալ։

Մին հետ էս նազիր-վազիրնեն ասալ ըն. «Քյինինքյ տեսնանք էն խոխան, վրեր տիրալ ընք քոլեն տակեն, հի՞նչ տեռավ»։

Քյեցալ ըն տեսալ, վրեր մազը սաղ շանը եր ա կալալ հու ինքյն էլ սաղ մարթ։ Նազիր-վազիրնեն էս վրեր տեսալ ըն, շատ ուրխացալ ըն հու եր կալալ տարալ մորը տվալ, թա էս քու խոխատ ա, ինքյ կալ պահե հու անումն էլ տիրալ ըն Ասլան-Բալասի։ Էս կնեգյն էլ ուրխացալ ա հու ինքյ ա կալալ խոխան, պահալ մըծըցրալ հու մազերն էլ խոզալ, ինսանու նման շինալ։

Ըստրա ըրըլըղավը մին քանե տարե ա անց կացալ, թաքավերեն տղան մին օշափու ախճիգյ ա իլալ օղում, մինը քթենում չըն իլալ, վրեր ըստրա հնգեր տան, վրեր քյինի։

Էս նազիր-վազիրնեն ասալ ըն. «Մինին տեղը գյուղում ընք»։

Թաքավերն ասալ ա. «Քյեցեքյ պերեքյ»։ Նրանք էլ քյեցյալ ըն, պերալ։

Թաքավերն ասալ ա. «Կկարի՞ս իմ տղես նհետ քյինիս փլան օշափեն ախճիգյն օղիս իմ տղես հետե»։

— Կկարիմ,— ասալ ա Ասլան-Բալասին,— ամմա մին մեծ թոփուզ շինիլ պետմա տաս։

Թաքավերն էլ վզավ ա կալալ։ Ենանա ուրան երգյիրումը հինչքան դամուռչիքյ ա իլալ, պերալ ա ածալ մին դուզ հու

ուրան երգիրումը հինչքան արկաթ ա իլալ, պիրիլ ա տվաը էն դուզը հու դամուչիքյը յըրա ըրալ, վըեր շինին։ Մին քանե տարումը վըեր էս դամուչիքյը շինալ ըն պրծալ, թաքավերն էլ հրաման ա տվալ, վըեր պերին։ Դուլգյըրնեն մին շատ մըեծ ըրբրա ըն շինալ, թոփուզը մին թահրավ քցալ ըն ըրբրեն մաչը հու սաղ երգիրումը հինչ եղնը, կյումաշ, տավալ հու ամեն հինչ վըեր ըրբրա քշող հրեյվան կա, պերալ ըն լծալ, հու էն լծած հրյվընեերեն ճոնդը եկալ ա թաքավերեն տոռնը, ամմա կրեցալ չըն, թա թոփուզը տեղան տուրուր տան։ Հինչքան հրյվընեերեն թակալ ըն, թա պատառ տուրուր տան, կրեցալ չըն։

Ասլան-Բալասին քյեցալ ա, տես ու տենին քռե տալավ թոփուզեն քշտեն մարթուցն ասալ. «էտ էլ չը՞ք կարում տուրուր տաք». հու ըրբրեն վեր քռե ա տվալ, ըրբրան ինքյը-ինքյը քյեցալ ա։

Էս մարթիքյը մնացալ ըն զարմացած։ Ախրը Ասլան-Բալասին քռե տալավ տարալ ա թաքավերեն տոռնը։ Էս օրեն էքյսը վըեր քյինիլ պիտար Ասլան-Բալասին, սաղ երգյրին մարթիքյը եկալ ըն հրվաքվալ թաքավերեն տոռնը, թա մին տեսնան հունց ա եր ունելու թոփուզը։ Քյինիլի վախտը վըեր եկալ ա, Ասլան-Բալասին եր ա իլալ ուրան ծին հու ծիան կռացալ, թոփուզը ծիծիդյնավը պցըրցըրալ հու իրեք հետ կլխավը շոռ տվալ, կոխալ կյոտեգյը հու թաքավերեն տղան էլ եր ա իլալ մին ծի, Ասլան-Բալասուն հետան քյեցալ։

Էս Ասլան-Բալասին հու թաքավերեն տղան շատ-խրեկյ քյեցալ ըն տրեսալ, վըեր մին վրտնանե մարթ բախրեքյ, ջեյրաննե առաչը քցած պահրմ ա, մինին էլ թողում չի, վըեր տես ու տեն փախչի։ Էս մին վրտնանե մարթը հրրցրալ ա թա. «Հոր ը՞ք քյինում»։

Ասլան-Բալասին ասալ ա. «Քյինում ընք օշափեն ախճիգյը օզինքյ»։

Էս մին վրտնանե մարթն էլ ասալ ա. «Էրկու չինինքյ, իրեք ինինքյ, քյինինքյ»։

Ասլան-Բալասին ասալ ա. «Ե՛կ»։

Մին խիլա էլ քյեցալ ըն տրեսալ, վըեր մին մարթ տափան անգուճ ա տինում։ Ասլան-Բալասին հարցրալ ա թա. «Խե ը՞ս տափան անգուճ օնում»։

էն մարթն ասալ ա. «Միրչեմնեն հարայ ըն անում, ընդրա ըմ անդուճ տինում»։

Տափան անդուճ տինող մարթը Ասլան-Բալասուն ասալ ա թա. «Հոր ը՞ք քյինում»։

Ասլան-Բալասին ասալ ա. «Քյինում ըմ օշափեն ախճիգյն օղեմ թաքավերեն տղեն հետե»։

Էս տափան անդուճ օնող մարթը ասալ ա. «Իրեք չինինքյ. չորս ինինքյ, քյինինքյ»։

Էս չորս մարթը շատ-խրեգ քյեցալ ըն տրեսալ, վրեր մին մարթ նի ա մտալ թոռնեն մաչը՝ էրվում ա, էլհա ասում ա թա. «Վա՜յ, մրսեցե, վա՜յ, մրսեցե», ամմա, վեր տո՜ւս ա կյամ իլա՜լ, տո՜ւս ղոլ էլ մրսում չի իլա՜լ, թըքանում ա իլա՜լ։

Էս թորեն նի մտնող մարթն ասալ ա. «Հոր ը՞ք քյինում»։

Ասլան-Բալասին ասալ ա. «Քյինում ընք օշափեն ախճիգյն էս տղեն հետե օղինքյ»։

Էս թորեն նի մտնող մարթն ասալ ա. «Չորս չինինքյ, հինգ ինինքյ, քյինինքյ»։

Էս հինգ մարթիքյը շատ-խրեգյ քյեցալ ըն, հսալ օշափեն տոնը հու ընգեղ օշափներեն ասալ թա. «Եկալ ընք ծեր ախճիգյն օղինքյ թաքավերեն հետե»։

Էս օշափնեն ասալ ըն. «Կտանք, ամմա վրեր մին պեն ասինքյ՝ անիքյ»։

Ասլան-Բալասին ասալ ա. «Ըշկներես յրան, կանինքյ. ասեքյ, տրեսնանք հի՞նչ ըք ասըմ»։

Օշափնեն ասալ ըն թա. «Էն ա մին բաղում մին վրեսկե խնձորի կա, օխտը կլխանի օշափն էլ տակեն քոն։ Ծղանա հու վրեր քյինի էն խնձորան մինը պիրի, մեր ախճիգյը ծեղ կտանք»։

Էս մին վրտնանե մարթը ասալ ա Ասլան-Բալասուն. «Էտ իմ վղես, ես կանիմ»։

Ասլան-Բալասին ասալ ա. «Քյինի, ամմա շո՜ւտ եկ»։

Էս մին վրտնանե մարթը ասալ ա. «Լա՜վ»։

Էս մին վրտնանե մարթը քյեցալ ա մին սհաթում հրսալ բաղը հու տրեսալ առրե՜ բաղեն մաչին մին վրեսկե խնձորի հու օխտը կրլխանե օշափն էլ տակեն քոն։ Էս Կաղլեգյ մարթը վխեցալ չի, անսա՜ս քյեցալ ա եր իլա՜լ ծառը հու ընգեղան խնձորը կտրալ։ Օղալ ա թա վեր կյա, օշափը ղուրթնա՜ցալ ա հու տրեսալ ծառեն յրան։ Օշափը եր ա իլա՜լ ծառը հու օղալ թա փռնե, բիրդա՜ն էս մին վրտնանեն լոք ա տվալ, ծառան վեր եկալ

տափը հու խնձորը ծեռքեն փախալ։ Էս օշափը հինչքան հետան վաղ ա տվալ, կրեցալ չի փռնե։ Ախրը մին վըտնանեն խնձորը տարալ ա տվալ օշափներեն։ Ըստրա հետե օշափնեն մնացալ ըն ղըրմացած հու ուրանք-ուրանք ասալ ըն թա. «Էս հունց ա՞-նինքյ, հունց չի ա՞նինքյ, եկեքյ հըմամեն ճուրը իփ ածինքյ հու նրանց ասինքյ՝ ծղանա հու վըեր նի մտնե հըմամեն մաչը, լղանա, մեր ախճիգյը ծեղ կտանք»։

Էս տափան անգուճ տինողը անգուճ ա տիրալ հու եկալ Ասլան-Բալասուն ասալ։ Ասլան-Բալասին հնգերունցը ասալ ա. «Էս հու՞ կանե, հու՞ չի անել»։

Էն թորեն նի մտնողը ասալ ա. «Ես կանիմ»։

Էքյսը օշափնեն եկալ ըն Ասլան-Բալասուն ասալ, թա. «Մին ալեն ասինքյ, թա վըեր անիքյ, մեր ախճիգյը ծեղ կտանք»։

Ասլան-Բալասին ասալ ա օշափներեն. «Հինչ ա՞»։

Օշափնեն ասալ ըն թա. «Մեր հըմամումը ծեղանա մինը լղանա, էն վախտը մեր ախճիգյը ծեղ կտանք»։

Ասլան-Բալասին ասալ ա. «Լավ ա»։

Ենանա եկալ ա թորեն նի մտնողեն ասալ։ Թորեն նի մտնողն էլ քյեցալ ա հըմամեն կոշտը հու ընդեղ շորերը հանալ, լոք տվալ ընգալ մաչը, լղացալ հու տուս եկալ։ Էս օշափնեն մնացալ ըն զարմացած։ Ենանա ախճիգյը տվալ ըն ուրանց, տարալ ըն։ Էս Ասլան-Բալասին թաքավերեն տղեն տիրալ ա մին ծիյի յրա հու ախճիգն էլ տղեն թարքյին հու ինքն էլ եր իլալ ուրան ծին, թոփուզը տիրալ կյոտկումը։ Ենանա ախճիգյը օշափներեն նհետ պըռոշտի ա ըրալ, ենանա քյեցալ ըն։ Ըսարանց հընգեր մարթիքն էլ քյեցալ ըն։ուրանց տեղը։

Ասլան-Բալասին, օշափեն ախճիգյը հու թաքավերեն տղան շատ-խրեգյ քյեցալ ըն, էս Ասլան-Բալասուն կյուղը եկալ ա։

Թաքավերեն տղեն ասալ ա. «Տուք յավաշ-յավաշ քյեցեքյ. ես էս ա կյամ ըմ»։

Ասլան-Բալասին քյեցալ ա թա կյուղի, էս տղան հու ախճիգյը մին պատառ քյեցալ ըն տրեսալ, վըեր մին պառավ մարթ լըելումը թավալ ա տամ։

Էս պառավ մարթը էս տղեն ըղաչանք ա ըրալ թա. «Ինձ էս լըելաս պրծըցըրու»։ Էս տղեն ծիյիցը ձռացալ ա թա պըրծըցնե. էս ախճիգյը թողացալ չի, թա. «Կըլոխտ խաթա կիկյա»։

Էս տղան ասալ ա. «Ջէ՛, ես պետմա եր օնեմ»։

Հինչքան էս ախճիգյը զոռալ ա, թա եր չօնե, էս տղան մտեգյ չըրալ, ծեռքը կոըցրալ ա, թա էն մարթին ծեռքան փռնե, բիրդա՜ն էս պառավ մարթը էս տղեն ծեռքան փռնալ ա հու շպռտալ քցա՜լ լըելը հու ինքյը ախճիգյը եր կալալ, փախալ։

Ասլան-Բալասին եկալ ա տրեսալ, վըեր թաքավերեն տղան լըելումը թավուլ ա տամ, հու ախճիգյն էլ ընդեղ չի։ Ասլան-Բալասին էս տղեն ծեռքան փռնալ ա հու լըելան եր կցրալ, հրցրալ. թա. «էտ խե ը՞ս լըելը ընգալ»։

Էս տղան ո՜ւրա՜ն կլխավը եկած ամեն պեները պատմալ ա։ Ասլան-Բալասին էս տղեն եր ա կալալ հու քյեցալ էն օշափներեն տանը ըռաչին կաղնալ հու թոփուզը կեսըվեր յրա ա ըրալ, օշափներեն տանը կեսը ցրև ա տվալ։ Սաղ մնացած մեկալ օշափնեն վըեր տրեսալ ըն, վխեցալ ըն թա ո՜ւրա՜նց էլ կսպանե, եկալ ըն Ասլան-Բալասուն վետները ընգալ, թա. «Քըմատա՛ղ, մեզ խե ը՞ս ըսպանում»։ Ասլան-Բալասին ասալ ա. «Ախճիգյը մին էլ եկալ ըք տարա՞լ»։

Էս օշափնեն ո՜ւրթում ըն կերալ թա. «Մունք չընք տարալ»։

Ասլան-Բալասին ասալ ա. «Չէ վըեր չէ, տուք ըք տարալ»։

Էս օշափնեն էլհա ուրթում ըն կերալ, ճաքճաք ըն եկալ, թա տարալ չընք։

Ենանա Ասլան-Բալասին ասալ ա, թա. «Տուք եր կալած էլ չինիքյ, տեղը կգյիդաք, ըսեցեքյ»։

Օշափնեն էլ ո՜ւրթում ըն կերալ, ճաքճաք ըն եկալ, թա. «Տեղը գյ՜ուդում չընք»։

Ասլան-Բալասին օշափներեն ասալ ա. «Ես քյինըմ ըմ, ամմա վայ էն օրեն, վըեր ըսկանամ թա էտա ծեր առեն ա, կյա՜լու ըմ լոխճու էլ ղինա՜ր-ղինա՜ր կտորիմ»։

Օշափնեն ասալ ըն. «Լա՜վ ա, վըեր ըսկանաս, եկ»։

Ենանա Ասլան-Բալասին օշափներեն ասալ ա. «Դե ինքյ կաչիքյ էս տղան ծեղ ըմանաթ, ամմա վըեր կյամ տեսնամ նաչաղ ա, յա մեռած, կաշինետ գյա՜րգյու՜ վըմ տալու»։

Ենանա օշափնեն Ասլան-Բալասուն ասալ ըն թա.

«Տեսնըմ ը՞ս էն թաքյ ասթխը»։

Ասլան-Բալասին ասալ ա. «Տեսնըմ ըմ»։

Օշափնեն էլ ասալ ըն, թա. «Վըեր վախտ նիդյա՜րա՜ն մնաս, էն վախտը էն ասթխեն մտեգյ ըրա, թա վըեր տեսնաս լա՜վ հու պարզ ա՝ էն վախտը գյիդա՜, վըեր տղան սաղ ա, ամմա թա վըեր տեսնաս՝ մին հա՜նգյվում ա, մին պենվում, էն վախտը գյիդա՜, վըեր նաչաղ ա»։

Ննան էս Ասլան-Բալասին շատ-խրեգյ քյեցալ ա տրեսալ, վրեր մին մարթ քչեղակեն հաքյվեքյը մին-մունու ետև ա կոխում, նրանք էլ դյուդում չըն իլալ։ Էս մարթը Ասլան-Բալասուն անա հրցրալ ա, թա. «Հոր ը՞ս քյինում»։

Ասլան-Բալասին ասալ ա. «Օշափեն ախճիգյը կորալ ա, քյինում ըմ քթենամ»։

Էս մարթս էլ ասալ ա. «Մին չինինքյ, էրկու ինինքյ, քյինինքյ»։

Ասլան-Բալասին ասալ ա. «Լավ ա, ե՛կ»։

Արանք քյեցալ ըն, տրեսալ մին մարթ ծառը հանում ա, մին էլ տնգում։ Էս մարթը Ասլան-Բալասուն հրցրալ ա, թա. «Հոր ը՞ք քյինում։»

Ասլան-Բալասին ասալ ա. «Օշափեն ախճիգյը կորալ ա, քյինում ընք քթենանք»։

Էս մարթս էլ ասալ ա. «Էրկու չինինքյ, իրեք ինինքյ, քյինինքյ»։

Ասլան-Բալասին ասալ ա. «Լավ ա, ե՛կ»։

Ասլան-Բալասին հու էն մարթիքյը շատ-խրեգյ քյեցալ ըն տրեսալ, վրեր մին մարթ թուքաքյը փչում ա՝ կյետեն քարերը պար ըն կյամ։ Էս մարթս Ասլան-Բալասուն ասալ ա. «Հո՞ր ըք քյինում»։

Ասլան-Բալասին ասալ ա. «Քյինում ընք օշափեն ախճիգյը քթենանք»։

Էս մարթս էլ ասալ ա. «Իրեք չինինքյ, չորս ինինքյ, քյինինքյ»։

Ասլան-Բալասին ասալ ա. «Լավ ա, ե՛կ»։

Ասլան-Բալասին, մին էլ էս իրեք մարթս շատ-խրեգյ քյեցալ ըն, մին տեղ մին տոն չինալ հու էս չորս հուքյին ընդեղ կացալ հու նորաթ-նորաթան մինը տանը կենում ա իլալ, մեկալնեն էլ քյինում ըն իլալ վրերս։

Առչի գոնումը քչեղակեն հաքյվեքյը վրեր մին-մունու ետև ա կոխալ, էն ա կացալ վրեր խորագյը իփի, մեկալնեն էլ քյեցալ ըն վրերս։ Էս խորագյ իփող մարթը տրեսալ ա, վրեր էս ա մին պիծի մարթ, մուրոքը տափավը քաշ ինելիս, եկավ էն մարթին ասից թա. «Մին պատառ փլավ տու, օտիմ»։

Էս մարթս էլ տվալ ա։ Կերալ ա պրծալ, էլհա օղալ։ Էն մարթն էլ տվալ ա։ Էլհա կերալ ա պրծալ, մին գոնում էլ օղալ։ Էն մարթն էլ տվալ ա։ Կերալ ա պրծալ, մին գոնում էլ օղալ։ Էն մարթը յրան կզնըվալ ա, էլ տվալ չի։ Էս պիծի մարթս էլ եր ա կացալ էս մարթիս թոփուզավը թխալ։ Էն մարթը ըշտափալ ա։ Ննան

էս պիծի մարթս սաղ փլավը կերալ ա հու ղըզղանը տափեն յրա փըսըվերալ հու տո̈ւս եկալ քյեցալ։

Եննան ըշտափած մարթին հնգերունքը կյամ ըն, տըեսնում, վըեր էս մարթս ըստեղ ըշտափած հու ղզղանը տափեն յրա փըսըվերած։

էս մարթիս յրա ճուր ըն շաղ տվալ, մին թա̈հրա̈վ եր կըցըրալ հու հըցըրալ թա. «էտ խե ը՞ս ըշտափալ»։

էս մարթըս էլ էն պիծի մարթին նաղլը ըրալ ա։ Եննան նոր մին էլ հաց ըն շինա̈լ, կերալ։

էքյսը էն ծառ հանող մին էլ տնգողն ա կացալ։

էլհա պիծի մարթը եկալ ա նհենց ըրալ հու փլավը կերալ։ էլհա ըշտափած մարթին հնգերունքը եկալ ըն տըեսալ, եննան սղըցըրալ ըն։

Ըստրա էքյսը թութա̈գյ ածողն ա կացալ հու նրանք քյեցալ ըն վըերս։ էլհա էն պիծի մարթը եկալ ա, էլհա ըշտըփցըրալ հու փլավը կերալ։ էլհա նրանք եկալ ըն տըեսալ ըշտափած, փլավն էլ կերած։ Ընդրանց նման էլհա էս մարթին եր ըն կցրալ հու մին էլ նոր հաց շինա̈լ, կերալ։

Ըստրա էքյսը նորաթը վըեր Ասլան-Բալասունն ա իլա̈լ, կացալ ա։

Ասլան-Բալասուն հնգերունքը վխեցալ ըն, թա քյինին վըերս։ Քյեցալ ըն տանը քմակեն կյողլու կացալ։ Ասլան-Բալասին խորագյը իփիլիս վախտը տըեսալ ա, վըեր հրես էն մարթը եկավ ո̄ւրա̈ն կոշտը, թա. «Մին պատառ փլավ տո, ուտեմ»։ Ասլան-Բալասին էլ տվալ ա։ էս պիծի մարթըս էլ կերալ ա հու էլ օղալ։ Ասլան-Բալասին էլ տվալ ա։ էս մարթըս էլ կերալ ա, մին էլ օղալ։ Ասլան-Բալասին էլ ավալ ա։ էլհա կերալ ա, մին էլ օղա։։ Ասլան-Բալասին յրան կղնըվալ ա, թա. «Բոլ ա»։ էս պիծի մարթըս էլ եր ա կացալ, թա թուփուղավը թխե։

Ասլան-Բալասին էս պիծի մարթիս թոփուզը խլա̈լ ա հու էս պիծի մարթիս կլխեն վեր թխալ ա, կիլո̄խը կտրվալ ա։ Եննան կիլո̄խը հու ջանը թուլուլ-թուլուլ ա ընգալ, տըռնավը տո̈ւս եկալ, քյեցալ։ Ասլան-Բալասին հետան վազ ա տվալ թա փռնե, կրեցալ չի։ էս մարթիս կիլո̄խը նան ջանը քյեցալ ըն։ Կլո̄խը քյեցալ ա, քյեցալ, բիրդա̈ն մին հոր ա պեցվալ հու նի ա ընգալ մաշը հու մին էլ կա̈լվա̈լ ա։ Ջանն էլ մին տեղավ ա քյեցալ, էլհա մին հոր ա պեցվալ հու նի ա ընգալ մաշը հու հորեն ըռեխը մին էլ կա̈լվա̈լ ա։ Ասլան-Բալասին քյինացալ ա մին էլ ո̄ւրա̈ն տեղը հու փլավն

իփալ։ Տրեսալ ա վրեր էս ա հնգերունքը եկեն։ Ասլան-Բալասին էլ ուրան ըսպանած մարթին նաղլն ըրալ ա։ Ենեան ասալ ա, թա. «Եկեք քյինինք էն հորը մտնինք տեսնանք»։ Նրանք ասալ ըն. «Եկեք»։

Ենեան քյեցալ ըն էն հորեն կոշտը հու ուրանց հնգերներեն մինին կախ տվալ, առռե էն կեսումը էս մարթըս ասալ ա. «Վա՜յ, ըրվեցե, վա՜յ, ըրվեցե»։

Հնգերունքը տուս ըն կալալ։ Ենեան մհենգ էն մինին ըն կախ տվալ, էլհա առռե էն կեսումը ասալ ա. «Վա՜յ, ըրվեցե, վա՜յ, ըրվեցե»։ Էլհա տուս ըն կալալ։

Ենեան էլհա էն մինին ըն կախ տվալ, էլհա առաչվանեն նման ա ըրալ։

Ենեան նորաթը եկալ ա Ասլան-Բալասուն։ Կապալ ըն, կախ տվալ։ Էլհա ասալ ա. «Վա՜յ, ըրվեցե, վա՜յ ըրվեցե», հնգերունքը տուս ըն կալալ։

Ենեան էլհա Ասլան-Բալասին ասալ ա, թա. «Էս դոնումս էլ վրեր հինչու անիմ, կախ տվեքյ։»

Սրանք էլհա կապալ ըն, կախ տվալ։

Ասլան-Բալասին ասալ ա. «Վա՜յ, ըրվեցե», տուս չըն կալալ։ Կախ ըն տվալ, հսալ ա առռե էն տակը հու ընդեղ եր ա եկալ։ Քյեցալ տրեսալ, վրեր էն ախճիգյը մին տեղ նստած հու օխտը կլխանի օշափն էլ ծնգանը յըրան քոն։

Էս ախճիգյն Ասլան-Բալասուն ասալ ա. «Հոր ր՞ս եկալ, օշափը օխտը օրան վաղի քոն ա իլալ հու վաղան մին օր ա մնացալ, եր ա կնալու քյեղ փըշտարախ անե»։

— Բա հունց ա՞նիմ,— ասալ ա Ասլան-Բալասին։

Թոփուղտ առռե էն մաչի կլխեն մին հետ թխե, էլ թխիս վեչ հա՜, վրեր մին հետ էլ թխիս, սղընալու ա, կյա՜ քյեղ ըսպանե։ Հու հինչքան ասե, թա. «Մին հետ էլ թխե», թխիս վեչ։

— Լա՜վ ա,—ասալ ա Ասլան-Բալասին։

Ենեան Ասլան-Բալասին օշափեն առռե էն մաչի կլխեն թխալ ա, կլոխը կտըրվալ ա, ընգալ ընդեղ։

Էս օշափը ասալ ա. Մին հետ էլ թխե, հա՜յ մին հետ էլ թխե։

— Թխել չըմ,—ասալ ա Ասլան-Բալասին,—քունը էտ ա, վրեր քյեղ տվե։

Էս օշափը ըստեղ ըստակալ ա, պրծալ։ Ասլան-Բալասին հորեն մաչումը իլած զատերը հու էս ըխճկանը եր ա կալալ, տարալ հորեն կոշտը։ Լոխ զատերը տուս ունելան ետը էս ախճիգյը Ասլան-Բալասուն ասալ ա. «Առաչ տու եր իլ»։

— Առաջ վրեր ես եր ինիմ,— ասալ ա Ասլան-Բալասին,— տու կյալ չըս։

Էս ախճիգյն ասալ ա. «Տե՛ս, ես վրեր եր ինիմ, ինձ եր ընունելու, փախճին։ Դե վրեր տհենց ա, ինքյ կալ իմ վրեսկե չըմոշկս, առետ պահե»։

Ննան էս ըխճրկանը մաշկան քյանդիրը կապալ ա հու երեղոլե մարթիքյը ծիքյ ըն տվալ տուս կալալ։ Ննան էլհա քյանդիրը կախ ըն տվալ, Ասլան-Բալասին մաշկան կապալ ա, նրանք էլ ծիքյ ըն տվալ։ Առեռ էն կեսումը քյանդիրը տինակավ կտրալ ըն, հու Ասլան-Բալասին թրըմփացալ ա տակը։ Ննան էս մարթիքյը էն ըխճրկանը եր ըն կալալ, տարալ։

Ընդեղ Ասլան-Բալասին մին խիլա վախտ կացալ ա, տրեսալ վրեր էս ա քյարվան ա կյալիս։ Ասլան-Բալասին ծվվացալ ա. քյարվանեն մարթիքյն էլ, եկալ ըն տուս կալալ։ Ասլան-Բալասին էն ըխճրկանը հետե ման կյալավ քյեցալ ա, տրեսալ վրեր էն իրեք մարթը մին քոլու տակ նստած, ախճիգյն էլ մաշ տեղ հու ըխճրկանը յրրան չուփ ըն քիցում, թա տրեսնան՝ հու՞ր կընգնե։

Էս ախճիգյն էլ ասում ա. «Հու վրեր իմ չմոշկս պիրի, ես ընդրա կքյինիմ»։

Ասլան-Բալասին ուրան իրեք հընգեր մարթուցը ասալ ա. «Տուք ինձ ընհե՞նց ըրեքյ»։ Ասալ ա հու ըսպընոտալ, ախճիգյը եր կալալ, տարալ։

Ասլան-Բալասին նիգյարան ա մնացալ թաքավերեն տղեն հետե, ասթխեն մտեգյ ա ըրալ, տրեսալ, վրեր մին հանգյվում ա, մին էլ պենվում։ Ասլան-Բալասին շուտ քյեցալ ա օշափներեն կոշտը, օշափներեն յրան կընըվալ։ Օշափնեն էլ ասալ ըն թա. «Հինչ ա՞նենքյ, մարթ ընք վրերս անում, ինքյը օտում չի»։

Ննան Ասլան-Բալասին թաքավերեն տղեն մին էլ օշափեն ախճիդյը եր ա օնում, քյինում։ Թաքավերը վրեր ըսկանում ա, շատ ուրխանում ա, ախճիգյը տղեն յրան օխտը օր, օխտը քշեր հրսանեքյ ա անում։

Ըստուծանա իրեք խնձոր եր ընգնե. մինը՝ ըսողեն, մինը՝ լսողեն, մինն էլ՝ չլսողեն։